

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության Տավուշի
Մարզի Իջևան համայնքի ավագանու
2022 թվականի ապրիլի 29-ի N 69 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ



ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ
(2022-2026 թթ.)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

(2022-2026 թթ.)

ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Կազմել է՝ համայնքի ղեկավար / Ա. Ճաղարյան/

Հաստատվել է համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 29-ի N 69 որոշման

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	5
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՈՒՂԵՐՁԸ.....	6
1. Համայնքի իրավիճակի վերլուծություն և գնահատում.....	7
1.1 Աշխարագրական դիրքը, պատմական ակնարկ	7
1.2 Ժողովրդագրություն և սոցիալական կազմ	13
1.3 Տեղական ինքնակառավարման մարմիններ	16
1.4 Չբուսաշրջային հետաքրքրություն ներկայացնող պատմական և մշակութային հուշարձաններ.....	18
1.5 Ձեռնարկատիրություններ և տնտեսություն	25
1.6 Առողջապահական հաստատություններ	27
1.7 Բնակտնտեսություն և համատիրություն	27
1.8 Գյուղատնտեսություն	28
1.9 Տրանսպորտ ճանապարհային տնտեսություն, բնակկոմունալ և շրջակա բնական միջավայրի պահպանություն	31
1.10 Կրթություն, մշակույթ, սպորտ, երիտասարդության հետ տարվող աշխատանքներ.....	33
1.11 Գովազդ, առևտուր և սպասարկում	36
1.12 Համայնքի ուժեղ և թույլ կողմերը	38
2. Համայնքի տեսլականը, ռազմավարությունը և հիմնական նպատակները.....	41
2.1 Համայնքի տեսլականը	41
2.2 Համայնքի զարգացման ռազմավարությունը	41
2.3 Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի հիմնական նպատակները	42
3. Համայնքի ֆինանսական միջոցների վերլուծություն և կանխատեսում.....	43
4. Ոլորտային ծրագրեր.....	45
4.1 Տրանսպորտ ճանապարհային տնտեսություն.....	45
4.2 Բնակտնտեսություն բնակկոմունալ և շրջակա բնական միջավայրի պահպանություն	48
4.3 Մշակույթի, երիտասարդության և սոցիալական ոլորտի հետ տարվող աշխատանքներ.....	59

4.4 Նրբություն.....	61
4.5 Գյուղատնտեսություն.....	62

Ներածություն

Հյաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան համայնքի 2022-2026 թթ. հնգամյա զարգացման (այսուհետ՝ Ծրագիր) ընդունման նպատակն է սահմանել համայնքի տեսլականը 2026 թվականին, այդ տեսլականին հասնելու ռազմավարությունը և հիմնական նպատակները:

Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել համայնքի առկա ռեսուրսները (ակտիվները), պարտավորությունները, տեղական առանձնահատկությունները, երկրի տնտեսական և քաղաքական առկա իրավիճակը, ինչպես նաև առաջիկա զարգացումների կանխատեսումները: Զարգացման ռազմավարության և գերակայությունների սահմանման ժամանակ ցուցաբերվել է ինտեգրացված մոտեցում (տնտեսական, սոցիալական, շրջակա միջավայրի և այլ գործոններ):

Հնգամյա զարգացման ծրագիրը կազմված է 4 բաժիններից

1. Համայնքի իրավիճակի վերլուծություն և գնահատում.
2. Համայնքի տեսլականը, ռազմավարությունը և համայնքի զարգացման հնգամյա ծրագրի հիմնական նպատակները.
3. Համայնքի ֆինասական իրավիճակի վերլուծում և կանխատեսում.
4. Համայնքի հնգամյա զարգացման ոլորտային ծրագրեր:

Ծրագրի մշակմանը մասնակցել են համայնքապետարանի աշխատակազմի բոլոր ստորաբաժանումները, հասարակական կազմակերպություններ և համայնքի ակտիվ խմբեր: Քննարկվել և հաշվի են առնվել հանրային լսումների արդյունքում ընդունելի համարված բոլոր առաջարկությունները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՈՒՂԵՐՁԸ

Տավուշի մարզի Իջևան համայնքի 2022-2026թթ-ի զարգացման ծրագիրը (այսուհետ՝ ՀԾԾ) մշակվել է համայնքապետարանի աշխատակազմի կողմից՝ համայնքի բնակիչների, ավագանու անդամների, հասարակական կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի հետ համատեղ: Այս փաստաթուղթը մշակելիս հաշվի է առնվել Նախորդ ժամանակաշրջանի զարգացման ծրագրերը, և դրանց շարունակականությունն ապահովելու հնարավորությունները: Այն նպատակ է հետապնդում հետևողականորեն բարեփոխումներ իրականացնելու ճանապարհով լուծել համայնքում առկա խնդիրները և խթանել համայնքում զբոսաշրջության զարգացմանը:

ՀԾԾ-ն մշակվել է հիմք ընդունելով ներկայումս գործող «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված ՏԻՄ-երի իրավասությունները, համայնքի ղեկավարի լիազորությունները՝ նրա գործունեության բնագավառներում, ՀԾԾ-ի մշակման և կառավարման վերաբերյալ օրենքի 37-րդ, 38-րդ և 53-րդ հոդվածների դրույթները, ինչպես նաև ՀՀ ՄՀ փորձագետների կողմից մշակված «Համայնքի զարգացման ծրագրերի մշակման և կառավարման մեթոդաբանությունը»: ՀԾԾ-ն մշակելիս հաշվի է առնվել : «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով սահմանված համայնքի հնարավորությունների շրջանակներում իրագործելի պարտադիր խնդիրները:

Գալիք տարիների համայնքի զարգացման հիմնական ուղղություններն են՝

- Բարելավել համայնքի ֆինանսական վիճակը՝ բարձրացնելով սեփական եկամուտների մակարդակը, խթանելով ձեռներեցությանը և համայնքի տնտեսության զարգացմանը
- Նպատակային օգտագործել բյուջեի միջոցները՝ բարձրացնելով բնակչությանը մատուցվող ծառայությունների և սպասարկումների որակը
- Կատարել ներդրումներ համայնքի բակարանային-կոմունալ տնտեսության բարեկարգման և ճանապարհային տնտեսության բնագավառներում
- Խթանել Նախադպրոցական կրթության, արտադպրոցական դաստիարակության, մշակութային և մարզական կյանքի զարգացմանը՝ իրականացնելով ենթակառուցվածքների վերանորոգման և գույքային վերազինման աշխատանքներ
- Իրականացնել սոցիալապես անապահով խավերի օժանդակման աշխատանքներ

Համոզված եմ, որ մեր համաքաղաքացիներն իրենց անմիջական մասնակցությամբ կօժանդակեն Իջևան համայնքի ՀԾԾ-ի իրագործմանը:

Իջևան համայնքի ղեկավար Ա. Ճաղարյան

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1.1 ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Իջևան խոշորացված համայնքը ընդգրկում է հետևյալ բնակավայրերը՝ Իջևան քաղաք և 18 բնակավայր (Ազատամուտ, Ակնաղբյուր, Աճարկուտ, Այգեհովիտ, Աչաջուր, Բերքաբեր, Գանձաքար, Գետահովիտ, Դիտավան, Ենոքավան, Լուսաձոր, Լուսահովիտ, Խաշթառակ, Ն. Ծաղկավան, Կիրանց, Սարիգյուղ, Սևքար, Վազաշեն):

Իջևան քաղաքը /մակերես՝ 43 կմ²/ / բնակչություն՝ 19356/ անհիշելի ժամանակներից /չկա պատմական ստույգ տվյալ/ Հայաստանի մայրաքաղաք Դվինից-Թիֆլիս ձգվող քարավանային ճանապարհի վրա կառուցվել են քարավանների հանգստավայրեր /քարավանատներ/: Դրանցից մի քանիսն գտնվել են ներկայիս Իջևանի տեղում, Աղստևի աջ ու ձախ մասերում:

Բնակչության թիվը սկսել է աճել հատկապես 19-րդ դարի 2-րդ կեսից հետո, երբ այժմյան Տավուշի մարզի Իջևանի /Զարվանսարայի/ հարակից տարածքներում սկսել են զբաղվել արհեստագործությամբ /գորգագործություն, փայտագործություն/ և աճեցնել կարտոֆիլ, այլուհետև՝ ծխախոտ: 1858թ. Զարվանսարայում բացվել է ծխական դպրոց, կառուցվել է «Սուրբ Ամենափրկիչ» եկեղեցին: Իջևանի հարակից համայնքում են գտնվում նաև 7-9-րդ. դարերում կառուցված սբ. Աստվածածին և սբ. Հովհաննես եկեղեցիները:

Իջևանը սկսել է բուռն զարգացում ապրել, հատկապես, անցած դարի 30-ական թվականներից սկսած, երբ շահագործման են հանձնվել մի շարք արդյունաբերական, շինարարական, սննդի և այլ ձեռնարկություններ:

Քաղաքն ունի 91 բազմաբնակարան շենքեր, 2350 առանձնատներ: Իջևանցիները ժամանակին զբաղվել են հողագործությամբ, անասնապահությամբ և արհեստագործությամբ /գորգագործություն, փայտի մշակություն, պատշարություն և այլն: 1996թ. թ. Իջևանը դարձավ Նորաստեղծ Տավուշի մարզի կենտրոնը:

Հեռավորությունը Երևանից՝ 133 կմ է, ՀՀ պետական սահմանից՝ 18 կմ, բարձրությունը ծովի մակերևույթից՝ 730 մ: Բնակլիմայական պայմաններ՝ գտնվում է բարեխառն գոտում, ամռանը միջին ջերմաստիճանը +29C է, ձմռանը՝ -3C: Պատմամշակութային կոթողներ՝ սբ.Ներսես Շնորհալի /վերակառուցված է/, սբ. Աստվածածին, սբ. Ամենափրկիչ: Բնակչության զբաղմունքը՝ բուսաբուծություն, անասնապահություն, արդյունաբերություն, տրանսպորտ, առևտուր, սպասարկում:

Ազատամուտ բնակավայր /մակերես՝ 0.5 կմ²/ /Բնակչություն՝ 3281/ Ազատամուտը հիմնադրվել է 1970թ. որպես „Բենտոնիտ,, կոմբինատի բանավան: Բնակավայրն ունի 22 բազմաբնակարան շենք, 22 քոթեջ: Հեռավորությունը Երևանից՝ 149 կմ, մարզկենտրոնից՝ 16 կմ, ՀՀ պետական սահմանից՝ 3.5 կմ: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 580 մ: Բնակլիմայական պայմանները՝ գտնվում է բարեխառն գոտում, անտառազուրկ է, ամռանը միջին ջերմաստիճանը +32C է, ձմռանը՝ +3C: Բնակավայրի զբաղեցրած տարածքը՝ 43.87 հա: Բնակչության զբաղմունքը՝ առևտուր, ծխախոտի վերամշակում, բենտոնիտային կավերի արտադրության սպասարկում:

Ակնաղբյուր բնակավայրը /մակերես՝ 5.8 կմ²/ /բնակչություն՝ 511/ գտնվում է Աղստև գետի ձախ ափին: Հարավից սահմանակից է Լուսաձոր, հյուսիսից՝ Աչաջուր բնակավայրերին: Ակնաղբյուրի շրջակայքի հնավայրերից նշանավոր է Նրա հարավային մասում գտնվող

սրբատեղին: Այստեղ կա մի դարավոր կաղնի ծառ: Ըստ ավանդության ծառը տնկել էր սպարապետ Վարդան Մամիկոնյան 450թ., Խաղխաղի հաղթական ճակատամարտից վերադառնալու ժամանակ: 1978թ. կաղնին տապալվեց: Ընկած կաղնու կողքին նոր կաղնի է տնկել Խորհրդային Միության մարշալ Յոֆիաննես Բաղրամյանը: Ըստ որոշ աղբյուրների Ակնաղբյուրի հին բնակիչները եղել են Արցախի Աղդան քաղաքից, որի պատճառով կոչվում էր Ներքին Աղդան: 1967թ. այն վերանվանվեց Սորոտ, իսկ 1970թ. Ակնաղբյուր: Հեռավորությունը Երևանից՝ 146 կմ, մարզկենտրոնից՝ 13 կմ, ՀՀ պետական սահմանից՝ 15 կմ, բարձրությունը ծովի մակերևույթից՝ 650 մ, բնակլիմայական պայմանները՝ գտնվում է բարեխառն գոտում, ամռանը միջին ջերմաստիճանը + 23°C է, ձմռանը՝ -1°C, Պատմամշակութային կոթողներ՝ նորակառույց սբ. Վարդան զորավոր մատուռ, բնակչության զբաղմունքը՝ բուսաբուծություն, անասնապահություն:

Աճարկուտ բնակավայրը /մակերես՝ 2 կմ²/ /բնակչություն՝ 210/ հիմնվել է 1924թ. Կունեն կոչվող տարածքում՝ փայտի սղոցման գործարանի շահագործման շնորհիվ: Որպես բանվորական վայր, շրջակա գյուղերից մարդիկ եկել են և հիմնական բնակություն հաստատել: 1932թ. արտադրության ընդլայնման շնորհիվ, սկսեցին կառուցել բնակելի տներ, դպրոց, հիվանդանոց, հացի փուռ, խանութ, ճաշարան և այլ օբյեկտներ:

1964թ. Սևքարի սղոց-գործարանը վերանվանվել է Աճարկուտ բնակավանի: Այն գտնվում է Իջևանի շրջանի հյուսիս-արևելյան տարածքում, բնության գոգտրիկ անկյունում: Գետակը, որը հոսում է բնակավանի միջով, կոչվում է Քարահան, որտեղ աճում է կարմրախայտ ձուկ:

Տեղի անտառտնտեսությունը զբաղեցնում է շուրջ 14,0 հազար հեկտար մակերես, որտեղ աճում են բարձրարժեք ծառատեսակներ՝ հաճարի, կաղնի, լորենի, թխկենի, բոխենի և այլն:

Աճարկուտի տարածքը հարուստ է պատմաճարտարապետական շինություններով՝ Աստվածածին, Կիրանցի եկեղեցիներ, Սամսոնի, Դեղձնուտի, Առաքելոց վանքեր, Սրանոցի կամուրջ, որոնք կառուցվել են 10-13-րդ դարում:

Տարածքը շատ նպաստավոր է էկոտուրիզմի զարգացման համար:

Հեռավորությունը Երևանից՝ 162 կմ, մարզկենտրոնից՝ 29 կմ, ՀՀ պետական սահմանից՝ 4 կմ, բարձրությունը ծովի մակերևույթից՝ 780 մ, բնակլիմայական պայմանները՝ գտնվում է բարեխառն գոտում, ամռանը միջին ջերմաստիճանը +31°C է, ձմռանը՝ -1°C, բնակչության զբաղմունքը՝ բուսաբուծություն, անասնապահություն, մեղվաբուծություն:

Այգեհովիտ բնակավայր /մակերես՝ 21.1 կմ²/ / բնակչություն՝ 3679/ հիմնադրվել է 1803-1804թթ., Ղարաբաղից տեղահանվածների կողմից: Նախկինում կոչվել է Ուզունթալա: Սկզբում այստեղ բնակվելիս է եղել ընդամենը 64 մարդ, իսկ 1992թ.՝ 3750 մարդ:

Այգեհովիտից էր Թամանյան դիվիզիայի հրամանատար գնդապետ Արտաշես Վասիլյանը և խորհրդային միության հերոս Ռուբեն Հակոբյանը:

1990-1994թթ. գյուղը առաջիններից իր վրա է վերցրել պատերազմի հարվածը և կրել զգալի կորուստներ: Ամբողջությամբ խաթարվել են ենթակառուցվածքները, հրետակոծվել բնակելի և այլ նշանակության կառույցներ: Այգեհովիտում է գտնվում 13-րդ դարում կառուցված Սրվելի վանքը, որը գտնվում է անմխիթար վիճակում: Վերջին տարիներին գյուղում պետական բյուջեի և այլ ծրագրերի միջոցով իրականացվել են դպրոցաշինական, ճանապարհաշինական, ջրաշինարարական որոշակի աշխատանքներ: Հեռավորությունը Երևանից՝ 156 կմ,

մարզկենտրոնից՝ 23 կմ, ՀՀ պետական սահմանից՝ 4.5 կմ, բարձրությունը ծովի մակերևույթից՝ 760 մ, բնակլիմայական պայմանները՝ գտնվում է բարեխառն գոտում, ամռանը միջին ջերմաստիճանը +30C է, ձմռանը՝ -2C, բնակավայրի զբաղեցրած տարածքը՝ 2177 հա, որից՝ 338 հա արոտներ, 625 հա վարելահողեր, 52 հա այգիներ: Բնակչության զբաղմունքը՝ բուսաբուծություն, այգեգործություն:

Աչաջուր բնակավայրը /մակերես՝ 29.5 կմ²/ / բնակչություն՝ 4582/ մարզի ամենահին բնակավայրերից է, հիշատակվում է դեռևս 16-րդ դարից: Աչաջուրը միշտ էլ աչքի է ընկել բնական աճով, ներկայիս Հաղարծին և Թեղուտ գյուղերը հիմնադրվել են Աչաջրից տեղափոխվածներով: Գյուղից 7 կմ հեռավորության վրա, անտառամերձ բարձունքում է գտնվում 12-րդ դարում կառուցված Մակարավանքը, որը աչքի է ընկնում եզակի ճարտարապետությամբ: Գյուղի կենտրոնում է գտնվում 18-րդ դարի կեսերին կառուցված սբ. Աստվածածին եկեղեցին: Աչաջրում առաջին անգամ դպրոց է հիմնվել 1880-ական թվականներին, իսկ 1937թ. գործում է միջնակարգ դպրոցը: Իր գոյության տարիներին տվել է հազարավոր շրջանավարտներ, որոնցից 26 ակադեմիկոսներ, դոկտոր-պրոֆեսորներ, գիտությունների թեկնածուներ, բանակի բարձրաստիճան սպաներ, երկու գեներալներ, պետական պաշտոնյաներ, նախարարներ, աշխատանքային հերոսներ և այլն: Պատերազմական գործողությունների հետևանքով տուժել են ինչպես ենթակառուցվածքները, այնպես էլ հասարակական և բնակելի կառույցները: Հեռավորությունը Երևանից՝ 151 կմ, մարզկենտրոնից՝ 18 կմ, ՀՀ պետական սահմանից՝ 8 կմ, բարձրությունը ծովի մակերևույթից՝ 750 մ, բնակլիմայական պայմանները՝ գտնվում է բարեխառն գոտում, ամռանը միջին ջերմաստիճանը +30C է, ձմռանը՝ -2 C, տնտեսությունների թիվ, բնակավայրի զբաղեցրած տարածքը՝ 2808. 2 հա, որից՝ 1082.8 հա արոտներ, 675.0 հա վարելահողեր, 126.0 հա այգիներ: Բնակչության զբաղմունքը՝ բուսաբուծություն, այգեգործություն:

Բերքաբեր բնակավայրը /մակերես՝ 11.8 կմ²/ /բնակչություն՝ 389/ Տավուշի մարզի հնագույն բնակավայրերից է: Տարածքը մաս է կազմել Գուգարք աշխարհի Կայան գավառի: Այստեղ է եղել Բագրատունիների ժամանակներից նշանավոր Գավարզին ժայռ-ամրոցը: Նախապես կոչվել է Ճոխագ, որը տարիների ընթացքում դարձել է Ջողագ: Վերանվանվել է խորհրդային տարիներին: Գտնվել է Թիֆլիս-Կարմիր կամուրջ-Դիլիջան-Երևան թագավորական քարավանային ճանապարհի վրա /Ղափլա յոլի/: XIX դարի կեսերին Տավուշի մարզի միակ բնակավայրն է եղել, որ ունեցել է կառուցապատման հատակագիծ: Այդ ժամանակ սկսել է զարգանալ որպես կարևոր փոստային /քարավանային/ կայան, իսկ Թիֆլիս-Ղազախ-Դիլիջան-Երևան խճուղային ճանապարհի կառուցումից հետո կորցրել է իր նշանակությունը: 90-ականների սկզբին պատերազմական գործողությունների ամենաթեժ կետերից է եղել: Գյուղի բոլոր կառույցները գրեթե ամբողջությամբ վնասվել են հրետակոծությունից: Շուրջ 900 հա որակյալ խաղողի և պտղատու այգիներ գտնվում են հակառակորդի հսկողության տակ: Բնակավայրն ունի 5 զոհված և 35 վիրավոր ազատամարտիկների ընտանիքներ: Հեռավորությունը Երևանից՝ 161 կմ, մարզկենտրոնից՝ 28 կմ, ՀՀ պետական սահմանից՝ 1.5 կմ: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 700 մ: Բնակլիմայական պայմանները՝ գտնվում է բարեխառն գոտում, ամռանը միջին ջերմաստիճանը +30C է, ձմռանը՝ -2 C: Պատմամշակութային կոթողներ՝ սբ. Գրիգոր եկեղեցի XIXդ.: Բնակչության զբաղմունքը՝ հողագործություն, այգեգործություն, անասնապահություն:

Գանձաքար բնակավայրը /մակերես՝ 33.7 կմ²/ /բնակչություն՝ 3680/ գտնվում է Իջևան քաղաքից 4 կմ հեռավորության վրա, Աղստևի վտակ Ուրթաջուր գետի երեք փոքր վտակների խառնարաններում: Ըստ հավաստի տեղեկությունների 1860-ական թվականներից երկու

տասնյակ ընտանիք Ներքին Աղդանից /ներկայիս Ակնաղբյուր գյուղից/ տեղափոխվում և բնակություն են հաստատում այդ տարածքում: Կառուցվել են երկու փոքր եկեղեցիներ, որոնց ավերակները մինչև հիմա պահպանվում են:

Գյուղում գործում է նաև ամբուլատորիա, կապի հանգույց: Հեռավորությունը Երևանից՝ 138 կմ, մարզկենտրոնից՝ 5 կմ, ՀՀ պետական սահմանից՝ 21 կմ, բարձրությունը ծովի մակերևույթից՝ 850 մ, բնակլիմայական պայմանները՝ գտնվում է բարեխառն գոտում, ամռանը միջին ջերմաստիճանը + 20C է, ձմռանը՝ -1C, պատմամշակութային կոթողներ՝ սբ. Գևորգ եկեղեցի: Բնակչության զբաղմունքը՝ բուսաբուծություն, անասնապահություն:

Գետահովիտ բնակավայրը /մակերես՝ 8.4 կմ²/ /բնակչություն՝ 2406/ գտնվում է Աղստև գետի ձախ ափին, Իջևան քաղաքից հեռու է ընդամենը 1,5 կմ: Ըստ տվյալների գյուղը սկզբում բնակեցվել է Արցախի՝ Թալա, Գետաշեն, և Խաչեն բնակավայրերից գաղթածներով: Գյուղը նախկինում կոչվել է Թալա, իսկ 1978թ.-ից կոչվում է Գետահովիտ: Գյուղը լինելով շրջկենտրոնի մոտ արագ զարգացել և աճել է բնակչության քանակը, գործում է միջնակարգ դպրոցը, մանկապարտեզը, բուժկետը և այլն: Բնակչության մի մասը նախկինում աշխատում էր Իջևան քաղաքի արդյունաբերական և շինարարական կազմակերպություններում, ներկայումս հիմնականում զբաղվում են գյուղատնտեսությամբ: Նախադրյալներ կան տուրիզմի զարգացման համար: Հեռավորությունը Երևանից՝ 136 կմ, մարզկենտրոնից՝ 3 կմ, ՀՀ պետական սահմանից՝ 17 կմ: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 700 մ: Բնակլիմայական պայմանները՝ գտնվում է բարեխառն գոտում, ամռանը միջին ջերմաստիճանը + 21C է, ձմռանը՝ 0C: Բնակչության զբաղմունքը՝ բուսաբուծություն, այգեգործությամբ և անասնապահություն:

Դիտավան բնակավայր /մակերես՝ 7.7 կմ²/ /բնակչություն՝ 417/ հիմնադրվել է 19-րդ դարի սկզբին: Սկզբում գյուղն ունեցել է 8 ընտանիք, որից հետո տարիների ընթացքում շրջակա գյուղերից մի քանի ընտանիքներ բնակություն են հաստատել այստեղ: 1950թ. գյուղում կառուցվել է դպրոց, բուժկետ, ակումբ: Հեռավորությունը Երևանից՝ 152 կմ, մարզկենտրոնից՝ 19 կմ, ՀՀ պետական սահմանից՝ 5 կմ: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 770 մ: Բնակլիմայական պայմանները՝ գտնվում է բարեխառն գոտում, ամռանը միջին ջերմաստիճանը +29C է, ձմռանը՝ -3C: Պատմամշակութային կոթողներ՝ սբ. Գրիգոր եկեղեցի XIXդ.: Բնակչության զբաղմունքը՝ բուսաբուծություն, անասնապահություն:

Ենոքավան բնակավայրը /մակերես՝ 15.5 կմ²/ /բնակչություն՝ 563/ ունի մոտ երկու հարյուր տարվա պատմություն: Մինչև 1931թ. գյուղը կոչվել է Զրդեվան: Մայիսյան ապստամբության ակտիվ մասնակից, տեղացի Ենոք Մկրտումյանի անունով 1931թ. գյուղը անվանակոչվել է Ենոքավան: Գտնվում է ծովի մակերևույթից 950 մ բարձրության վրա: Գյուղամերձ տարածքներում առկա են հին ամրոցների և եկեղեցիների փլված պատեր, կիսաքանդ մատուռներ:

Գյուղում հնում եղել են երեք բերդ ամրոցներ, որտեղից հայտնաբերվել են բրոնզե դարի զարդեր, կավե կճուճներ, այլ իրեր, նրանցից մի մասը գտնվում է Երևանի պատմության թանգարանում: Գյուղում կան բոլոր պայմանները Էկոտուրիզմի զարգացման համար: Հեռավորությունը Երևանից՝ 144 կմ, մարզկենտրոնից՝ 11 կմ, ՀՀ պետական սահմանից՝ 17.5 կմ: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1100 մ: Բնակլիմայական պայմանները՝ գտնվում է բարեխառն գոտում, ամռան միջին ջերմաստիճանը + 22C է, ձմռանը՝ -2C: Պատմամշակութային կոթողներ չկան: Բնակչության զբաղմունքը՝ բուսաբուծություն, անասնապահություն, տուրիզմ:

Լուսահովիտ բնակավայրը /մակերես՝ 4.8 կմ²//բնակչություն՝ 332/ Նոր պատմություն ունի: Շուրջ 100 տարի առաջ Խաչթառակից մեկ-երկու ընտանիք բնակություն են հաստատել այդ տարածքում, այն կոչվել է Շովիզ և փաստորեն եղել է Խաչթառակի թաղամաս 1991թ. դարձել է ինքնուրույն բնակավայր և կոչվել է Լուսահովիտ: Գյուղում 1949թ. սկսել է գործել տարրական, այնուհետև հիմնական դպրոց: Հեռավորությունը Երևանից՝ 147 կմ, մարզկենտրոնից՝ 14 կմ, ՀՀ պետական սահմանից՝ 13 կմ: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1000 մ: Բնակլիմայական պայմանները՝ անտառային տարածք է, խոնավ, ամռանը միջին ջերմաստիճանը +28C, ձմռանը՝ 0-ից -3C: Պատմամշակութային կոթողներ՝ Մորո ձորո սբ. Աստվածածին VI-VII-րդ դար: Բնակչության զբաղմունքը՝ բուսաբուծություն, անասնապահություն

Լուսածոր բնակավայրը /մակերես՝ 6.3 կմ²// բնակչություն՝ 704/ Նախկինում կոչվել է Ղրանլուղ-Դարա, այնուհետև Խավարածոր, իսկ Խորհրդային կարգերի հաստատվելուց հետո Լուսածոր: Ըստ պատմական տվյալների 3 ընտանիք Ղարաբաղից եկել են այս տարածքը և հիմք հանդիսացել հետագայում գյուղի հիմնադրմանը: Գյուղում գործում է ութամյա դպրոց, բնակչության հիմնական զբաղմունքը հողագործությունն ու անասնապահությունն է: Հեռավորությունը Երևանից՝ 143 կմ, մարզկենտրոնից՝ 10 կմ, ՀՀ պետական սահմանից՝ 13 կմ Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 720 մ: Բնակլիմայական պայմանները՝ գտնվում է բարեխառն գոտում, ամռանը միջին ջերմաստիճանը + 23C է, ձմռանը՝ 0C: Պատմամշակութային կոթողներ չկան: Բնակչության զբաղմունքը՝ բուսաբուծություն, անասնապահություն:

Խաչթառակ բնակավայրի /մակերես՝ 18.3 կմ² // բնակչություն՝ 1931 մարդ / տարածքը բնակեցված է եղել անհիշելի Ղարաբաղի Զրաբերդ և Գյուլիստան գավառներից 1799-1804թթ. Վերաբնակիչներ բնակություն են հաստատել գյուղի ներկա տարածքում: Հեռավորությունը Երևանից՝ 144 կմ, մարզկենտրոնից՝ 11 կմ, ՀՀ պետական սահմանից՝ 12 կմ: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 750 մ: Բնակլիմայական պայմանները՝ գտնվում է բարեխառն գոտում ամռանը միջին ջերմաստիճանը +28C է, ձմռանը՝ -3C: Պատմամշակութային կոթողներ՝ սբ. Աստվածածին եկեղեցի XIXդ. - գտնվում է կիսավեր վիճակում: Բնակչության զբաղմունքը՝ բուսաբուծություն, այգեգործություն և անասնապահություն:

Ծաղկավան բնակավայրը /մակերես՝ 9.1 կմ²// բնակչություն՝ 506/ Տավուշի մարզի հնագույն բնակավայրերից է, հիմնադրվել է մոտավորապես 13-րդ դարի կեսերին: Գյուղը եղել մելիքանիստ, որի համար մինչև 1946թ. կոչվել է Մելիքգյուղ: Մելիքների Նախածեռնությամբ գյուղի տարածքում կառուցվել է Սուրբ Հակոբ եկեղեցին: Բնակչության հիմնական զբաղմունքը հողագործությունն ու անասնապահությունն է: Հեռավորությունը Երևանից՝ 161 կմ, մարզկենտրոնից՝ 28 կմ, ՀՀ պետական սահմանից՝ 4.5 կմ: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 840 մ: Բնակլիմայական պայմանները՝ գտնվում է բարեխառն գոտում, ամռանը միջին ջերմաստիճանը + 30C է, ձմռանը՝ - 2C: Պատմամշակութային կոթողներ՝ սբ.Հովհաննես եկեղեցի 19-րդ դար, գտնվում է կիսավեր վիճակում: Բնակչության զբաղմունքը՝ բուսաբուծություն, այգեգործություն, անասնապահություն:

Կիրանց բնակավայրը /մակերես՝ 5.9 կմ²// բնակչություն՝ 408/ ըստ պատմական տվյալների Կիրանց գյուղը /նախկինում Կունեն/ հիշատակվում է 4-րդ դարից: Հանդիսացել է Գուգարք աշխարհի Կանգարք գավառի իշխանանիստը: Չարգացում է ապրել 12-13-րդ դարերում Չաքարյանների և Մահկանաբերդի Արծրունիների իշխանության ժամանակ: 16-18-րդ դարերում պատկանել է Խերումյան մելիքական տոհմին: Կիրանցիների հիմնական զբաղմունքը անասնապահությունն ու հողագործությունն է: Հեռավորությունը Երևանից՝ 163 կմ, մարզկենտրոնից՝ 30 կմ, ՀՀ պետական սահմանից՝ 1.5 կմ: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 720 մ: Բնակլիմայական պայմանները՝ գտնվում է բարեխառն գոտում, ամռանը միջին ջերմաստիճանը +30C է, ձմռանը՝ -2C: Պատմամշակութային կոթողներ. սբ. Երրորդություն եկեղեցի XIXդ. – գտնվում է կիսավեր վիճակում: Բնակչության զբաղմունքը՝ բուսաբուծություն, անասնապահություն, անտառտնտեսություն և այգեգործություն:

Սարիգյուղ բնակավայրի /մակերես՝ 14.1 կմ²// բնակչություն՝ 1357/ բնակչությունը տեղափոխվել է Նոյեմբերյանի Ղոշղոթան և Դովեղ գյուղերից: Ներկայիս գյուղատեղը հիշատակվում է 1700 թվականներից: Տեղանքը հնում շրջապատված է եղել անտառներով: Մինչև 1953թ. գյուղը կոչվել է Սոփ գյուղ և հետո անվանակոչվել է Սարիգյուղ, այն ծովի մակերևույթից բարձր է 750 մ, զբաղեցնում է 1472,0 հա վարչական տարածք, որը 14 կմ սահմանակից է Ադրբեջանին: Բնակչությունը ինչպես հնում, ներկայումս նույնպես հիմնականում զբաղվում է բուսաբուծությամբ և անասնապահությամբ: Հեռավորությունը Երևանից՝ 155 կմ, մարզկենտրոնից՝ 22 կմ, ՀՀ պետական սահմանից՝ 2 կմ: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 800 մ: Բնակլիմայական պայմանները՝ գտնվում է բարեխառն գոտում, ամռանը միջին ջերմաստիճանը + 29C է, ձմռանը՝ 3C: Պատմամշակութային կոթողներ՝ սբ. Հովհաննես եկեղեցի 19-րդ դար, գտնվում է կիսավեր վիճակում: Բնակչության զբաղմունքը՝ բուսաբուծություն, անասնապահություն:

Սևքար բնակավայրը /մակերես՝ 47.2 կմ²// բնակչություն՝ 2342/ Արաբական տիրապետության ժամանակաշրջանում մտնում էր Գանձակի ամիրության մեջ: Սևքարը իր գոյության ընթացքում երկու անգամ լիովին ավերվել է՝ 13-րդ դարում թաթար-մոնղոլների կողմից, իսկ 1721թ. Աղա Մահմեդ խանի ավերիչ արշավանքների պատճառով: Բնակչության հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է, մասնավորապես՝ անասնապահությունը և այգեգործությունը: Հեռավորությունը Երևանից 157 կմ է, մարզկենտրոնից՝ 24 կմ, ՀՀ պետական սահմանից՝ 6 կմ: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 800 մ: Բնակլիմայական պայմանները՝ գտնվում է բարեխառն գոտում, ամռանը միջին ջերմաստիճանը +30C է, ձմռանը՝ -2C: Պատմամշակութային կոթողներ՝ սբ. Պողոս և Պետրոս եկեղեցի -գտնվում է կիսավեր վիճակում: Բնակչության զբաղմունքը՝ բուսաբուծություն, այգեգործություն, անասնապահություն:

Վազաշեն բնակավայրը /մակերես՝ 16.8 կմ²// բնակչություն՝ 862/ որպես բնակավայր հիշվում է վաղ ժամանակներից: Մարզի ամենահին բնակավայրերից է: Հնում այն կոչվել է Լալագեղ, Աջղղեղ, խորհրդային կարգեր հաստատվելուց հետո մինչև 1970թ՝ Լալիգյուղ, այնուհետև՝ Վազաշեն: Լինելով սահմանամերձ բնակավայր, հայ-ադրբեջանական հակամարտության տարիներին գյուղի այգիները հիմնականում մնացին կրակի գոտում և լիովին ոչնչացվեցին: Ադրբեջանական դիրքերի հսկողության տակ են գտնվում նաև հարյուրավոր հեկտար այլ հողատեսքեր: Հեռավորությունը Երևանից՝ 165 կմ, մարզկենտրոնից՝ 32 կմ, ՀՀ պետական սահմանից՝ 2 կմ: Բարձրությունը ծովի մակերևույթից՝

750 մ: Բնակլիմայական պայմանները՝ գտնվում է բարեխառն գոտում, ամռանը միջին ջերմաստիճանը +30C է, ձմռանը՝ -2C: Պատմամշակութային կոթողներ՝ սբ. Աստվածածին եկեղեցի /19-րդ դար/, գտնվում է կիսավեր վիճակում: Բնակչության զբաղմունքը՝ բուսաբուծություն, անասնապահություն:

1. 2 ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄ


Բնակավայրի բնակչության թիվը կազմում է 47332 մարդ:

Համայնքի բնակչությունը

N	Տարիքային խմբեր	Ընդամենը	Արական	Իգական
1	0-5 տարեկան	2906	1506	1400
2	6-19 տարեկան	8627	4501	4126
3	20-64 տարեկան	30208	14353	15855
4	64 տարեկանից ավել	5591	2235	3356
	Ընդամենը	47332	22595	24737

Բնակչության տարիքային կազմը

Բնակչության տարիքային կազմը



Բնակչության սոցիալական կազմը

Սոցիալական կազմը	Քանակը
կանայք	24737
Տղամարդիկ	22595
Թոշակառուներ	8500
միակողմանի ծնողազուրկ երեխաներ	128
հայրենական պատերազմի մասնակիցներ	
Հաշմանդամներ	1495
Գործազուրկներ	1743
ընտանիքների (ծխերի) թիվը	5100
Փարոս/ ընտանեկան նպաստների	1557

Բնակավայրում առկա են մոտ 12366 զբաղված քաղաքացիներ


Հիմնախնդիրներ՝

- համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին աջակցման անհրաժեշտություն.
- հաշմանդամների սոցիալական ինտեգրման ծրագրերի ոչ բավարար քանակ.
- հաշմանդամություն ունեցող անձանց համար՝ սոցիալական, առողջապահական, հոգեբանական և խնամքի ծառայությունների մատուցման անհրաժեշտություն.
- թեքահարթակների թույլ բազա.
- զբաղվածության խնդիրների աստիճանական կարգավորում և գործազրկության մակարդակի նվազում.
- տարեցների և միայնակ ծերերի համար՝ սոցիալական, առողջապահական, հոգեբանական և խնամքի ծառայությունների մատուցման անհրաժեշտություն.


1.3 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

2021թ. նոյեմբերի 14-ին կայացած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ: Ընտրվեց համայնքի ղեկավար և համայնքի ավագանի: Ավագանին բաղկացած է 27 անդամներից:

Համայնքի ղեկավարի աշխատակազմի և համայնքային ենթակայության կազմակերպությունների հաստիքների թիվ հետևյալն է՝ 165



Համայնքային ենթակայության կազմակերպությունների հաստիքների թիվ



Համայնքային ծառայությունն առավել որակյալ դարձնելու համար անհրաժեշտ է՝

- կազմակերպել ավագանու գործունեությունն առավել արդյունավետ՝ ապահովելով բազմակարծության և բացարձակ թափանցիկության աշխատանքային միջավայր.
- ավագանու նիստերի ընթացքում լսել կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների պետերի, ՀՈԱԿ-ների տնօրենների, քաղաքացիներին ծառայություններ մատուցող այլ կազմակերպությունների ղեկավարների հաշվետվությունները.
- համայնքային աշխատողների պարբերական վերապատրաստումներ՝ փոխանակման և փորձի փոխանակման ծրագրեր.
- թարմացնել համայնքապետարանի կայքը՝ այն դարձնելով ինտերակտիվ՝ բնակչության հետ կապը դարձնելով առավել արդյունավետ.
- ելնելով ավագանու նիստերի նորակառույց դաիլիճի հնարավորությունից՝ ապահովել բնակիչների մասնակցությունը իրենց հուզող հարցերի քննարկմանը:

1.4 ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

Իջևան համայնքը հանդիսանալով Տավուշի մարզի վարչաքաղաքական և հոգևոր մշակութային կենտրոնը իր բնական և մարդկային ռեսուրսներով, կարող է դառնալ ՀՀ տուրիզմի հրապուրիչ կենտրոններից մեկը: Նախկինում քաղաքում գործող հյուրանոցը, տուրիստական բազան, տրանսպորտային կապերը, բարեկարգ ճանապարհները, կանաչապատ ծաղկուն փողոցներն ու այգիները նպաստում էին զբոսաշրջության ավանդույթների ձևավորմանը: Այսօր անհրաժեշտություն է դարձել վերականգնել այդ ավանդույթները:

Տուրիզմի զարգացման ուղղությամբ համայնքի հնարավորությունների ճիշտ օգտագործումը կխթանի տնտեսական զարգացմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը, աղքատության մակրդակի նվազմանը:

Տարեցտարի ավելանում են Իջևան համայնք այցելող զբոսաշրջիկների թիվը, ինչպես արտասահմանից, այնպես էլ հանրապետության տարբեր մարզերից: Այսօր խիստ անհրաժեշտություն է ժամանակակից հանգստի ժամանցի գործարար համալիր ինֆրաստրուկտուրայի ստեղծումը որի մեջ կարևոր է հյուրանոցների, տուրիստական, ժամանակակից առևտրի տների, տուրիստական կենտրոնի առկայությունը, ինչպես նաև ներքաղաքային ճանապարհների և փողոցների բարեկարգումը, լուսավորության ցանցերի ավելացումը և վերանորոգումը: Համայնքի աշխուժացմանը կնպաստի նաև փառատոնների կազմակերպումը, ագրոտուրիզմի, էքստրեմալ տուրիզմի, Էկոտուրիզմի և ուխտագնացային տուրիզմի զարգացումը, որոնց նախադրյալները կան համայնքում: Ոլորտը զարգացնելու համար հարկավոր է կազմակերպել դասընթացներ՝ ոլորտով զբաղվողների համար:

Տուրիզմի զարգացմանը մեծ աջակցություն կլինի նաև կիսակառույց ճոպանուղու գործարկումը, որի շինարարությունը 1989 թվականին դադարեցվել է: Գործարկման համար անհրաժեշտ կլինի մոտավոր 1 500 000 000 դրամ ներդրում:

ԻՋԵՎԱՆԻ ԳԻՆՈՒԿՈՆՑԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ

Գործարանը հիմնադրվել է 1951 թ-ին, որի շնորհիվ Իջևանի գինին ճանաչվում է նաև Հայաստանի սահմաններից դուրս: Այստեղ վերջին տարիներին արտադրվում են ինչպես տեղական հումքից պատրաստված, մեծ ճանաչում վայելող խմիչքներ՝ գինի, կոնյակ և օղի, այնպս էլ՝ հյուլթեր, պահածոներ: Գործարանում կարելի է ծանոթանալ գինու արտադրության տեխնոլոգիաներին, համոզվել իջևանյան գինիները:

ՍՐԲՈՑ ՆԱՀԱՏԱԿԱՑ ԲԱՑ ԽՈՐԱՆ

Նվիրված Եղեռնի 100-րդ տարելիցին՝ կառուցվել է 2015 թ-ին: Գտնվում է <<Իջևան>> պատմաերկրագիտական թանգարանի հարևանությամբ:

ՍՈՒՐԲ ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑԻ

Կառուցվել է 1839 թ-ին: Խորհրդային տարիներին եկեղեցին վերածվել էր կինոթատրոնի: Եկեղեցին վերակառուցվել է 2012թ-ին: Շինարարության ժամանակ օգտագործվել են նաև հին եկեղեցու պատերից մնացած քարերը:

ԳՈՒՆԱԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՇԱՏՐՎԱՆՆԵՐ

Շտրվանները տեղակայված են քաղաքի կենտրոնական հատվածում: Համայնքում անցկացվող համաքաղաքային միջոցառումները կազմակերպվում են շատրվանների հրապարակում: Այն սիրված ժամանցի վայր է տեղացիների և զբոսաշրջիկների համար: Գունաերաժշտական շատրվանները կառուցվել են 80-ական թվականներին՝ գտնվում է բարոյապես մաշված վիճակում և պահանջվում է կապիտալ վերանորոգում:

ՄԱԿԱՐԱՎԱՆՔ

Մակարավանքը կառուցվել է 13-րդ դարում: Մակարավանքն իր բոլոր յուրահատուկ զարդաքանդակներով, հարստությամբ և բազմազանությամբ միշտ համեմատվում է Աղթամար, Բղնոն-Նորավանք, Գանձաքար վանքերի հետ: Մակարավանքը գտնվում է Իջևան քաղաքից 24 կմ հեռավորության վրա՝ Աչաջուր գյուղում: Մակարավանք պատմամշակութային կենտրոնը հանդիսանում է հայտնի միջնադարյան ճարտարապետական հոյակապ կառուցվածքի օրինակ:

“ԻՋԵՎԱՆ” ՊԱՏՄԱ-ԵՐԿԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳՐԱՆ

Հիմնադրվել է 1955թ-ին: Թանգարանն ունի ցուցանմուշների ֆոնդ: Այստեղ ցուցադրված են Իջևանի տարածաշրջանում պեղված հնագույն իրեր: Նախկինում այն եղել է հեղափոխության թանգարան և այստեղ են պահվում այդ ժամանակաշրջանի իրադարձությունների հետ կապված պատմական իրեր և ցուցանմուշներ: Գտնվում է քաղաքի հարավային մուտքի մոտ, Իջևան-Երևան մայրուղու հարևանությամբ:

“ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ” ՀՈՒՇԱՐՁԱՆ

Հուշարձանը կառուցվել է 1971 թ-ին: Այն տեղադրված է քաղաքի հյուսիսային մուտքի մոտ, Իջևան-Թբիլիսի մայրուղու հարևանությամբ՝ բարձունքի վրա: Այս հոյակերտ կոթողը դեռևս խորհրդային տարիներին համարվում էր Իջևան քաղաքի խորհրդանիշը:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՉԲՈՍԱՅԳԻ

Տեղակայված է քաղաքի կենտրոնական մասում: Այստեղ 1985-1992 թվականներին կազմակերպվել են քանդակների միջազգային սիմպոզիումներ: Աշխարհի տարբեր երկրներից ժամանած քանդակագործները տեղացի արվեստագետների հետ ստեղծել են արվեստի գործեր, որոնք տեղադրվել են քաղաքի տարբեր հատվածներում: Դրա շնորհիվ Իջևանը ստացել է "100 քանդակների քաղաք" անվանումը: Չբոսայգում է գտնվում նաև քաղաքի արհեստական ջրավազանը:

ԼԱՍՏԻՎԵՐ

Լաստիվերը ամենահայտնի վրանային վայրն է Հայաստանում, հատկապես նրանց համար, ովքեր նախընտրում են ակտիվ հանգիստը: Տարածքը բնակեցված է եղել վաղնջական ժամանակներից, որի մասին վկայում են տեղի քարանձավները: 13-14 դարերում մոնղոլական արշավանքներից տարածքի բնակչությունը պատսպարվել է հենց այս քարանձավներում: Այստեղ նաև ճգնափորներ են բնակվել (այստեղից էլ Լաստիվեր անապատ անվանումը): Իսկ Լաստիվեր կոչվել է այն պատճառով, որ քարանձավ բարձրանալու համար Լաստի պես գերաններ են իրար կապել ու ճոպանով ձգել վերև. բարձրացնողը ձայն է տվել «լաստն ի վեր»: Քարանձավի պատերին մի նկարիչ թողել է մի որմնաքանդակ, պատկերելով հարսանիք: Քաղաքակրթությունից մեկուսացած Լաստիվեր /Անապատ/ Էկո-ճամբարը առաջարկում է յուրօրինակ հնարավորություն վայելելու կիրճի, ջրվեժի կուսական բնության խաղաղ և դրական էներգիան: Լաստիվերը գտնվում է Իջևան քաղաքից 13 կմ հեռավորության վրա:

ՅԵԼԼ ԷՔՍՏՐԻՄ ՊԱՐԿ

Ենթազանի լեռների սրտում տեղակայված „Յելլ Էքստրիմ“ պարկը իրական դրախտ է նրանց համար, ովքեր ցանկանում են համադրել ադրենալինը և Էկոլոգիական միջավայրը: Պարկը առաջարկում է ավելի քան 10 արտասովոր և կրեատիվ գործունեության տեսակներ և ճանաչվում է որպես ռեգիոնի անգուգական զվարճանքի այգիներից մեկը: Այգու ընթացիկ գործունեությունը ներառում է զիփլայնը /5 տարբեր գործեր/, արկածային այգին, ձիարշավները, վիա Ֆերատտան, վայրէջքը թափանցիկ գնդով, Էքստրեմալ շրջագայությունները, ժայռամագլցումը, պարապլանով թռիչքները և փեյնթբոլը:

ԱՇՈՏ ԵՐԿԱԹ ԹԱԳԱՎՈՐԻ ԱՐՁԱՆԸ

914-929թթ. Հայ ժողովրդի պատմության իշխանության տարիները նշանակալի դեր ունեցած Աշոտ Երկաթ արքան Իջևանի տարածաշրջանում ունեցել է ամրոց, որը մասնակիորեն պահպանված է և գտնվում է Երևան-Իջևան մայրուղու աջ մասում՝ քաղաքից 7 կմ հեռավորության վրա: 2017 թ-ին կառուցվել է մեծանուն արքայի արձանը և տեղադրվել քաղաքի Սահմանադրության հրապարակում:

ԴԵՆԴՐՈՊԱՐԿ

Այգին հիմնադրվել է 1961 թ-ին: Դենդրոպարկում կա ավելի քան 650 ծառատեսակ ու թուփ: Բույսեր կան գրեթե բոլոր մայրցամաքներից: Այն գտնվում է Աղստև գետի աջ ափին՝ գետի հին հունի տեղում: Համարվում է Իջևան քաղաքի տեսարժան վայրերից մեկը:

ՍՐՎԵՐԻ ՎԱՆՔ

Սրվելի վանքը գտնվում է Այգեհովիտ գյուղից մոտ 3 կմ հարավարևմուտք, սարալանջին, „Խաչի տակ»՝ կոչվող վայրում: Միջնադարյան Հայաստանի Կայան գավառի (վաղ միջնադարում՝ Գուգարաց աշխարհի Ձորովոր գավառ) հոգևոր ու մշակութային կենտրոններից է: Հուշարձանախումբը բաղկացած է երկու եկեղեցիներից, միաբանների բնակելի և տնտեսական շինություններից:

ՎԱՐՂԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻ ԿԱՂՆԻ

Վարդան Մամիկոնյանի կաղնի, կենսաբանական բնության հուշարձան Հայաստանի Հանրապետությունում: Ակնադբյուրի հարավային մասում գտնվում է մի սրբատեղի՝ մի դարավոր կաղնու ծառ: Ըստ ավանդույթի ծառը տնկել է Վարդան Մամիկոնյանը 450 թվականին, երբ վերադառնում էր Խաղխաղի հաղթական ճակատամարտից: Սակայն 1978 թվականին կաղնին տապալվեց, ընկած կաղնու կողքին Խորհրդային Միության մարշալ Հովհաննես Բաղդամյանը մի նոր կաղնի տնկեց: Այն գրանցված է Հայաստանի Հանրապետության Բնապահպանության նախարարության բնության պետական հուշարձանների ցանկում:

ԱՂՋԿԱ ԲԵՐԴ

Աղջկա բերդը գտնվում է Տավուշի մարզի Իջևան քաղաքից մոտ 16 կմ դեպի հարավ-արևմուտք՝ Աղստև գետի հովտում՝ անտառապատ սարի գագաթին: Այն եղել է խոշոր ռազմական կառույց՝ բոլոր կողմերից եզերված լինելով բարձր ժայռերով: Միաժամանակ այն պաշտպանված է արհեստական, բրգավոր պարիսպներով:

Չարգացած միջնադարում բերդը, ինչպես և ամբողջ գավառը, կոչվել է Կայեն: Կայեն ամրոցը եղել է բավական անառիկ մի կառույց՝ հանդիսանալով գավառի իշխանների նստավայրը:

ՄԱՆԹԱՇԱԲԵՐԴ / ԱՇՈՏ ԵՐԿԱԹԻ ԱՄՐՈՑ

Մանթաշաբերդ (երբեմն՝ Մանթաշ ամրոց, Մանթաշ կալա, Կարա-Կալա), հանդիսանում է ռազմական կառույց Տավուշի մարզում՝ տեղակայված լինելով Իջևան քաղաքից 7 կմ հարավ՝ Աղստև գետի աջ ափի անտառապատ լեռան գագաթին: Շրջապատված է լայն, բրգավոր պարիսպներով: Պատկանում է Բագրատունիների ժամանակաշրջանին: Այն Հայաստանի անառիկ ամրոցներից մեկն է:

ԱՌԱՔԵԼՈՑ ՎԱՆՔ

Առաքելոց վանքը Հայ առաքելական եկեղեցու հին կոթող է, գտնվում է Կիրանց գյուղից 3 կմ արևմուտք, անտառապատ լեռների լանջերին: Սամսոնի վանքը կառուցված Խնձորկուտ կոչվող անտառապատ սարահարթի վրա, 12-13-րդ դարերում:

ԿԻՐԱՆՑ ՎԱՆՔ

Հուշարձանախումբը գտնվում է Կիրանց (Նախկին Գետաշեն) գյուղից մոտ 12 կմ արևմուտք, համանուն վտակի ձախ ափին: Բաղկացած է երեք եկեղեցուց, գավիթ- սրահներից, սեղանատնից, բնակելի և օժանդակ շինություններից: Վանքը պարսպապատ է: Համարյա բոլոր վանքապատկան կառույցները աղյուսաշեն են (քարից են որմնախարիսխները, ծածկասալերը, առանձին մանրամասերը) և այդ տեսանկյունից Կիրանց վանքը հայկական միջնադարյան ճարտարապետության եզակի հուշարձաններից է: Վանքը թվագրվում է 13-րդ դար:

ԾՈՎԻՉ — ՄՈՐՈ ՁՈՐՈ ՎԱՆՔ

Միջնադարյան հայկական ճարտարապետական այս հուշարձանը տեղակայված է Տավուշի մարզի Լուսահովիտ (Նախկին Ծովիզ) գյուղի մոտակայքում: Մորո Ձորո վանքը իր բարգավաճման տարիների ընթացքում կարևոր հոգևոր և մշակութային կենտրոն էր հանդիսանում: Սակայն մոնղոլական արշավանքներից հետո վանքը կորցրել է իր արտոնությունները. միաբանությունը ցրվել է, իսկ Սբ. Աստվածածին եկեղեցին գործել է որպես ծխական եկեղեցի մինչև 19-րդ դ:

ԹԹՈՒՋՈՒՐ

Այս փոքրիկ "սառցե" անկյունը Ակնադբյուր գյուղի հարևանությամբ է գտնվում: Ժայթքող ջրի խուլ դղրդոցը լսվում է դեռ հեռվից: Հանքային ջուրը "սառեցրել" է շրջակայքը. մոշի քարացած թփերի վրայով հանգիստ կարելի է քայլել:

ԹԵԼԻԿ

Թելիկը տավուշյան արհեստագործական ավանդույթների վերականգնման, պահպանման ու տարածման նպատակ ունեցող կենտրոն է: Տավուշի թեմի և «Արևիկ» սոցիալ-կրթական կենտրոնի աջակցությամբ կանանց մի խումբ միավորվեց՝ օգտագործելու իրենց ասեղնագործական, կարի, հելոնագործության և այլ հմտություններն: Այստեղ կազմակերպվող փորձառությունների նպատակը զբոսաշրջային խմբերի և անհատների համար տավուշյան արհեստագործական միջավայրը ներկայացնելն է, 1,5-2 ժամ տևողությամբ վարպետաց դասեր անցկացնելը, որոնց ընթացքում այցելուները մասնակցելով՝ ստեղծում են հայկական զարդանախշեր:

ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՄԻՆՉՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

- Թեվրաքարի ամրոցը
- Հիվանդանոցի դամբարանադաշտը
- Թալայի Հանդ դամբարանադաշտը
- Անտառային փողոցի դամբարանը
- Սպիտակ լճի դամբարանադաշտը

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԵՎ ՎԱՆՔԵՐԻ ՑԱՆԿ

- Սուրբ Ամենափրկիչ եկեղեցի (Այգեհովիտ)
- Սուրբ Ամենափրկիչ եկեղեցի (Իջևան)
- Սուրբ Աստվածածին եկեղեցի (Ակնադբյուր)
- Սուրբ Աստվածածին եկեղեցի (Այգեհովիտ)
- Սուրբ Աստվածածին եկեղեցի (Աչաջուր)

- Սուրբ Աստվածածին եկեղեցի (Գանձաքար)
- Սուրբ Աստվածածին եկեղեցի (Ենոքավան)
- Սուրբ Աստվածածին եկեղեցի (Լուսաձոր)
- Սուրբ Աստվածածին եկեղեցի (Խաշթառակ)
- Սուրբ Աստվածածին եկեղեցի (Վազաշեն)
- Առաքելոց վանք (Կիրանց)
- Բարձրյալ խաչ
- Բերդավանք վանք
- Սուրբ Գրիգոր եկեղեցի (Դիտավան)
- Սուրբ Գևորգ եկեղեցի (Բերքաբեր)
- Սուրբ Երրորդություն եկեղեցի (Կիրանց)
- Խաչքազարի վանք (Գանձաքար)
- Ծովիզի վանք (Լուսահովիտ)
- Սուրբ Հովհաննես եկեղեցի (Սարիգյուղ)
- Սուրբ Հովհաննես մատուռ (Իջևան)
- Հոնուտա վանք (Վազաշեն)
- Սուրբ Ներսես Շնորհալի եկեղեցի (Իջևան)
- Սուրբ Նշան եկեղեցի (Գետահովիտ)
- Սուրբ Պողոս-Պետրոս եկեղեցի (Սևքար)
- Սամսոնավանք (Կիրանց)
- Սուրբ Անդրեի վանք (Իջևան)
- Օկոնի վանք (Ենոքավան)

ԻՋԵՎԱՆՅԱՆ ՈՒՏԵՍՆԵՐ

- Խոզի կաշի
- Տապակած արյուն
- Հովվի խորոված
- Կոնչոլ
- Չխրթմա
- Փիփերթ

- Խաթիաշ
- Սպաս
- Հոնի թթու
- Լոբով սպաս
- Կաթնով
- Կորկոտ
- Խաշիլ
- Դումրակ
- Ավելուկի փթռուկ

ԹԽՎԱԾՔՆԵՐ

- Կրկենի
- Բաղարջ կամ կաթնահունց
- Թրթերուտ /Բիշի/
- Գաթա /խորիզով/

Հիմնախնդիրներ`

- տեսարժան վայրերի սահմանափակ քանակ.
- հյուրընկալության ոլորտի մասին հավաստի և ամբողջական տեղեկատվության պակաս.
- կողմնորոշումը ամառային հանգստի վրա.
- ժամանցի և զվարճությունների վայրերի բացակայություն.
- զբոսաշրջային տարածքների սանիտարահիգիենիկ վիճակ
- անտառահատումներ
- տեղեկատվական ցուցանակների բացակայություն
- մշակութային միջոցառումների կազմակերպման և տարածման մասին տեղեկատվության պակաս
- Հայաստանի սահմաններից դուրս պատշաճ ներկայացման պակաս
- բարձրակարգ հյուրանոցների բացակայություն

1.5 ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Իջևան համայնքում գրանցված ձեռնարկությունները և անհատ ձեռնարկատերերը ըստ գործունեության ոլորտների

N	Գործունեություն	Իրավաբանական անձիք, ձեռնարկություններ	Անհատ ձեռնարկատերեր
1.	Գյուղատնտեսություն	3	258
2.	Վերամշակող արդյունաբերություն		25
3.	Էլեկտրաէներգիա, գազ, ջրամատակարարում	3	
4.	Շինարարություն	9	13
5.	Առևտուր, մեքենաների, կենցաղային սարքավորումների տրոհում	204	415
6.	Հյուրանոցներ, ռեստորաններ	12	82
7.	Տրանսպորտ և կապ	5	18
8.	Անշարժ գույքի գործակալություններ	3	1
9.	Առողջապահություն և սոց. ծառայություն	23	20
10.	Կոմունալ	1	3
11.	Թեթև արդյունաբերական	2	
12.	Սննդամթերք արտադրող ձեռնարկություններ	6	34
13.	Չովացուցիչ ըմպելիք և հանքային ջրեր արտադրող ձեռնարկություններ		12
14.	Գինու-կոնյակի արտադրություն	1	7
15.	Կահույք, բետոնյա իրեր և քար արտադրող ձեռնարկություններ	5	17
16.	Կարի արտադրամաս		12

Համայնքի արդյունաբերության առաջատար ճյուղը մշակող արդյունաբերությունն է: Առավել զերակշռող են սննդարդյունաբերությունը, քարամշակումն ու փայտամշակումը: Մարզում արտադրվում է բենտափոշի, երեսպատման սալիկներ, գինիներ, հագուստ, ծաղիկներ, ելակ պահածոներ և այլն: Մարզում արտադրվող արդյունաբերական արտադրանքից արտաքին շուկա են արտահանվում գինիներ, հագուստ, ծաղիկ, քարե և փայտե արտադրատեսակներ:

Կան մանր ու միջին ձեռնարկատերեր, որոնք արժեքավոր ծառատեսակներից պատրաստում են զանազան շինանյութեր, գյուղատնտեսական գործիքներ, կենցաղային գործիքներ: Քարի վերամշակումը նույնպես ավանդական ճյուղ է, քանի որ կան տարբեր հանքավայրեր՝ քարերի բազմաթիվ տեսակներով: Տնտեսության բարելավման հետ միասին զարգանում է նաև այդ արտադրատեսակը: Աստիճանաբար աշխուժանում են նաև սպասարկման ոլորտի հաստատությունները: Գործում են Արդշինբանկի, ACBA–կրեդիտ ագրիկոլ բանկի, ՎՏԲ բանկի, Կոնվերսբանկի, Արարատբանկի, ABB բանկի, AEB բանկի, Յունի բանկի մասնաճյուղերը՝ իրականացնելով ծառայություններ: Ռեստորանները, խանութները զգալի թիվ են կազմում, որոնք աստիճանաբար առավել բարեփոխվում են հարմարավետ են դառնում և իրականացնում են որակյալ սպասարկում: Համայնքում կան նաև առանձնատուն-հյուրատներ՝ հաճեցած անհրաժեշտ պայմաններով, որոնք արդեն մի քանի տարի է ընդունում են զբոսաշրջիկներ արտերկրից, հանրապետության այլ բնակավայրերից: Տարեցտարի ավելանում է ընտանեկան տուրիզմով զբաղվող ձեռներեցների թիվը: Համայնքի բնակչությունն ըստ զբաղվածության բաժանվում է մի քանի խմբի՝ մանր և միջին առևտրով զբաղվողներ, պետական և տեղական ինքնակառավարման կառուցվածքներում աշխատողներ, գործազուրկներ, սեզոնային շինարարություններում աշխատողներ և սպասարկման ոլորտում աշխատողներ:

Հիմնախնդիրներ՝

- օտարերկրյա ներդրողների համար ցածր գրավչություն.
- նպաստավոր և խրախուսող օրենսդրական դաշտի կատարելագործման կարիք.
- թողարկվող արտադրանքի ընդհանուր ծավալում արտահանվող արտադրանքի փոքր ծավալ:

Մրցունակ ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու համար համայնքում նպատակահարմար է անցում կատարել ինովացիոն արտադրությանը և ինովացիոն բիզնեսին: Համայնքում հատկապես կարևոր է բարձր որակ ապահովող զբոսաշրջության ինդուստրիայի համալիր զարգացումը, ինովացիոն տեխնոլոգիաներով աշխատող փոքր և միջին ձեռնարկությունների կայացումը: Նախատեսվում են նաև մասնավոր ընկերություններում մասնակցային ներդրումներ: Համայնքապետարանի կողմից փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացմանը աջակցելու մեխանիզմները հետևյալն են՝

- քույր քաղաքների հետ փոխադարձ փորձի փոխանակման և համատեղ բիզնես ծրագրերի իրագործմանն աջակցության ցուցաբերում.
- համայնքային տնտեսության բոլոր ոլորտներում ինովացիոն նախաձեռնությունների խրախուսում և աջակցություն.
- արտոնյալ պայմաններով տարածքների հատկացում:

1. 6 ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Իջևան խոշորացված համայնքում գործում է 27 բուժօգնականներ, որից միայն Գանձաքարի ԳԲԱ- ՅՈՒԿ-ն է համայնքային ենթակայության

1.7 ԲՆԱԿՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ

N		Քանակ
1.	Համայնքի բազմաբնակարան շենքերի և բնակարանների թիվը	104/3158
2.	Բնակֆոնդի ընդհանուր և բնակելի մակերեսները	230270
3.	Համայնքային սեփականություն	1
4.	Մասնավոր (սեփականաշնորհված)	230270
5.	Բազմաբնակարան վթարային բնակելի շենքեր և բնակարաններ	1
6.	Համայնքում առկա ժամանակավոր կացարաններ	50

Բազմաբնակարան շենքերի տանիքների պահպանման և վերականգնողական աշխատանքների խնդիրը համարվում է առաջնային և հրատապ հարցերից մեկը Իջևան համայնքի համար: Դրա պատճառն այն է, որ երկար ժամանակ չեն կատարվել անհրաժեշտ վերանորոգման աշխատանքներ:

Իջևան խոշորացված համայնքում գործում է մեկ համատիրություն:

Մինչև 5 հարկանի շենքերի ասբոշիֆինի տանիքներ վերանորոգման համար անհրաժեշտ է մեծ ծավալի հիմնանորոգման աշխատանքներ, այն պարզ պատճառով, որ ավելի վաղ կառուցված շենքեր են և տանիքները ֆիզիկապես մաշվել են:

Կարևորագույն խնդիրներից է նաև ջրագծերի և կոյուղիների ներքին ցանցերի վերանորոգման աշխատանքների իրականացնելը, քանի որ նույնպես ֆիզիկապես մաշվել են և բազմաբնակարան շենքերում լուրջ պրոբլեմներ են առաջանում:

Ուշադրություն պետք է դարձնել բազմաբնակարան շենքերի շքամուտքերի վերանորոգման և բակերի բարեկարգմանը, ինչպես նաև խաղահրապարակների կառուցմանը:

Համայնքապետարանի ենթակայության կառույցները /հիմնականները, կրթօջախները և այլն/ վաղեմություն ունեցող շենքեր են և հիմնանորոգման կարիք ունեն: Ուստի առաջնահերթ խնդիր է համարվում այդ կառույցների նորացումը և հնարավորին ժամանակակից պահանջների համապատասխանեցումը:

Համայնքի զբոսայգիները, ինչպես նաև փողոցների հարակից կանաչ գոտիների բարեկարգումը նույնպես դասվում է կարևոր խնդիրների շարքին: Դրանք կարևոր են տուրիզմի զարգացման տեսանկյունից:

Իջևան համայնքի զարգացմանը նպաստող կանոնադրյալ խնդիր է փողոցների, մայրերի և միջբակային ճանապարհների ասֆալտապատման, վերանորոգման աշխատանքների իրականացումը:

Հիմնախնդիրներ՝

- բազմաբնակարան շենքերի տանիքների անմխիթար վիճակ.
- վերանորոգման կարիք ունեցող շենքերի առկայություն.
- բակային տարածքների անբարեկարգ վիճակ.
- խաղահրապարակների անհրաժեշտություն.
- համատիրությունների արդյունավետ կառավարման և ֆինանսական պլանավորման ոչ բավարար մակարդակ.
- համատիրությունների ռեսուրսների սահմանափակություն.
- քաղաքացիների մոտ համատիրությունների գործունեության վստահության պակաս.
- համատիրությունների գործունեության կարգավորման և կառավարման փորձի փոխանակման կարիք:
- խմելու ջրագծերի համակարգերի կառուցումն և վերանորոգման անհրաժեշտություն
- ոռոգման ջրագծերի համակարգերի կառուցումն և վերանորոգման անհրաժեշտություն

1.8 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Իջևան խոշորացված համայնքի բնակչության 25-30 % զբաղվում է գյուղատնտեսությամբ: Իջևան համայնքը հանրապետության վառ արտահայտված գյուղատնտեսական շրջաններից է: Անասնաբուծության մեջ առաջատար ճյուղեր են համարվում խոշոր եղջերավոր անասնաբուծությունն ու խոզաբուծությունը: Վերջին տարիներին զարգանում է նաև մեղվաբուծությունը: Բուսաբուծության մեջ առաջատար ճյուղերն են հացահատիկային մշակաբույսերի մշակությունը, խաղողագործությունն ու պտղաբուծությունը: Գյուղատնտեսական նշանակության հողերը բաշխված են հետևյալ կերպ՝ .

Տեսակ	հա
Խոտհարքներ	4202.25
Արոտավայրեր	12793.43
Վարելահողեր	6594.45
Պտղատու այգի	281,21
Այլ հողատեսքեր	3438.64

Իջևան խոշորացված համայնքում բնակչությունը հիմնականում զբաղված է գյուղատնտեսական աշխատանքներով:

N	Տեսակ	Անվանում
1	Հատպտուղն	մորի, մոշ, ելակ
2	Միրգ	նուռ, թուզ, սալոր, խաղող, արքայանարինջ, դեղձ, սերկևիլ
3	Բանջարեղեն	Սինդրիկ, շուշան, եղինջ, փիփերթ, անանուխ, դաղձ, ավելուկ
4	Հացահատիկ	ցորեն, եգիպտացորեն, գարի

Համայնքի արոտավայրերը նպաստավոր են նաև խոշոր և մանր անասնապահությամբ և անասնաբուծական մթերքների արտադրությամբ և վերամշակմամբ զբաղվելու համար: Հիմնական զբաղմունքը անասնաբուծությունն է: Անասնապահությամբ զբաղվողները արտադրում են կաթ, միս, բուրդ: Անասնապահության հիմնական ճյուղը խոշոր եղջերավորների բուծումն է:

N	Անվանում	Քանակ
1	Խոշոր եղջերավոր անասուններ	11070
2	Գոմեշներ	466
3	Խոզեր	5046
4	Ոչխարներ	3685
5	Այծեր	459
6	Թռչուններ	67158
7	Մեղվաբնտանիքներ	4629
8	Ճագարներ	3593
9	Ձիեր	1970
10.	Ավանակներ	43

